ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ԿԴ-1146/11014

ք. Երևան « 14 » « փետրվար » 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն՝ Ս. Մարկոսյանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 1146 «Հանրակրթության ծրագիր» ծրագրի «11014. Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) հեղինակային կրթական ծրագրերի վերամշակման և իրականացման, անհատի օժտվածության զարգացման բաց համակարգի, ստեղծագործ անհատի կրթական պատվերի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 118 413 800 (մեկ հարյուր տասնութ միլիոն չորս հարյուր տասներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, նախարարությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում տեղեկացնում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8 չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսում և խնայողություն) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20 -ը:

2.4.9 ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են ՊՈԱԿ-ում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0,5 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ն ա խ ա ր ա ր ու թ յ ու ն	Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ
Ք. Երևան, Կառավարական 2 շենք	Ք. Երևան, Ռաֆֆի 57
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005205	Հ/Հ 900018003203
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 01804186
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող	Տնօրեն
Լ. Գասպարյան	Ս. Մարկոսյան
L.S. (ստորագրություն)	L.S. (ստորագրություն)

Հավելված
2022թ. փետրվարի 14-ին
կնքված ԿԴ-1146/11014 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Աջակցություն Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին հեղինակային կրթական ծրագրերի իրականացման համար
Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում.
Հեղինակային կրթական ծրագրերի վերամշակում և իրականացում. Անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ. Ստեղծագործ անհատի կրթական պատվերի իրականացում:

Ստեղծողի մոբիլ դպրոց:
Ստեղծագործ անհատի կրթական պատվեր, անհատի օժտվածության զարգացման հանրակրթական բաց համակարգ:
Հեղինակային կրթական ծրագիրը՝ ուսումնական օրացույցով, ուսումնական նախագծերով, անհատական թվային միջոցներով:

Իրականացվելիքմիջոցառումներ						
N N ը/կ	անվանում	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	Հեղինակային հանրակրթական ծրագրերի մշակման բաց համակարգի պահպանություն:	Կրթահամալիրի հեղինակային մանկավարժության լաբորատորիայի գործունեություն: Մեդիագրադարանի գործունեություն: mskh.am բազմալեզու կայքի, mskh ցանցի գործունեություն: «Դպիր» մանկավարժական բազմալեզու հանդեսի հրատարակում:	1. Հեղինակային մանկավարժության լաբորատորիայի, մասնագիտական խմբերի, կրթահամալիրի մասնաժողովի գործունեություն, ծրագրերի լրամշակում. 2. 2021-2022 ուստարվա գիտափորձերի՝ 9-րդ, 12-րդ դասարանների մասնագիտական կողմնորոշման մեկամյա ծրագրերի կազմակերպում, արդյունքների ներկայացում. 3. Նախագծային ուսուցման կազմակերպում. 4. mskh.am ցանցի գործունեություն, այդ թվում՝ • բազմալեզու կայք, ենթակայքեր • հեղինակային կրթական ծրագրի	**Մանկավարժական 21 աշխատողների հիմնական աշխատավարձ:** **Մանկավարժական աշխատողների լրավճարներ բովանդակության ստեղծման համար՝ ծրագրային մշակումներ, մեդիագրադարանի, «Դպիր» հանդեսի:** *Թվային անհատական միջոցներով, համացանցով, բլոգներով ուսուցման, ուսումնական նախագծերի, սովորողների ընտրությամբ դասընթացների, այդ թվում՝ օտար լեզուների, խորացված ուսուցման, մարզական ակումբների փոքր խմբերով ուսումնական աշխատանքի կազմակերպման, հեղինակային ուսումնական բաց միջավայրի ստեղծման և զարգացման ծախսերը կատարվում են սովորողների ուսումնառության պայմանագրերով որոշված ուսումնական*	2022թ. ընթացքում	35913800

		ուսումնական օրացույց, • անընդհատ նորացվող մեդիագրադարան, էլեկտրոնային ուսումնական նյութեր, փաթեթներ, • «Դպիր» մանկավաժական պարբերական. • «Սեբաստացի» TV • ուսումնական բլոգներ՝ մանկավարժական աշխատողների, սովորողների, ստեղծագործական խմբերի, նախագծերի. 5. հեղինակայինկրթականծրագրերի մշակման,լրամշակմանմեջներառ վածմանկավարժականաշխատող ներիհմտություններիզարգացման ծրագրերի,նախագծերի,մանկավ արժականաշխատողիընտրությա նբացհամակարգիգործունեություն :Մանկավարժական մշակումների, ուսումնասիրությունների, թագմանությունների կազմակերպում, հրապարակում:	*վճարներով:*		
խադպրոցական ինակային ական ծրագրի ղմակերպում:	Կրթահամալիրի նախակրթարաններում 2-5 տարեկանների խմբերի պահպանություն:	2-5 տարեկանների խմբերի շուրջտարյա գործունեություն. 5 նախակրթարան, 2-4 տարեկանների 14 խումբ, մինչև 440 սան: 2-5 տարեկանների խմբերում մանկան ինքնուրույնության զարգացման,տեխնոլոգիական, մեդիատեխնոլոգիական հմտություններիձևավորման,սոցիալ ականացման, միջավայրի և գիտելիքների ինքնուրույն ուրացման, մանկական ծեսիամենշաբաթյանախագծեր: Հեղինակային նախադպրոցական	**Ծրագրի մանկավարժական 34 աշխատողների հիմնական աշխատավարձ**: *Սաների սննդի, հիգիենայի, կենցաղի ծախսերը, հեղինակային նյութական, ուսուցողական միջավայրի ստեղծման, զարգացման ծախսերը կազմակերպվում են սաների խնամքի և զարգացման պայմանագրերով որոշված ծնողական վճարներով:*	2022թ. ընթացքում	50000000

			կրթական ծրագրի տարածում 2-5 տարեկանների դաստիարակներիբլոգների, դաստիարակների լաբորատորիայի, «Պարտեզ» բլոգների միջոցով:			
3	Սովորողների, մանկավարժական աշխատողների օժտվածության զարգացման բաց համակարգի պահպանություն: Լրացուցիչ, այդ թվում՝ արտադպրոցական կրթական ծրագրերի կազմակերպիչ ուսումնական կենտրոնների պահպանություն:	Կրթահամալիրի գեղարվեստի-քանդակի, երաժշտության, ծեսի և ազգագրական պարի, բնասերի դպրոց՝ ուսումնական ագարակ, խաղողի և գինու դպրոց, դպրոց բնության գրկում՝ Արատեսի դպրական կենտրոն, մարզական, շախմատի, տեխնիկական ստեղծագործության, մանկավարժության ուսումնական կենտրոնների գործունեություն: Ստեղծագործական խմբերի, ակումբների գործունեություն:	Լրացուցիչ, այդ թվում՝ արտադպրոցական կրթական ծրագրերի կազմակերպիչ ուսումնական 10կենտրոն (3550 սովորող),ստեղծագործական 12 խումբ (250 անդամ), ուսումնական ֆլեշմոբների, ստուգատեսների, փառատոների, ճամբարների, այդ թվում՝ ռազմամարզական,ավելի քան 6000 շահառու: Ուսումնական կենտրոններում սովորողների նախասիրությունների զարգացման դասընթացների, նախագծերի, ակումբների, մասնագիտական կողմնորոշման նախագծերի կազմակերպում: • Ամենամյա ուսումնական ֆլեշմոբներ, • ամենամյա հանրակրթական ստուգատեսներ, այդ թվում՝ հանրակրթական Դիջիթեք, բնագիտատեխնիկական ստեղծագործության, ձմեռային մարմնամարզական, ազգագրական, ընթերցողական, մայրենիի (այդ թվում՝ արևմտահայերենի), թարգմանական, լրագրողական-հասարակագիտական նախագծերի, տեխնոլոգիական, բնապահպանական նախագծերի, քանդակագործության, արտ-միջավայրի, երաժշտական, թատերական, կինո-ֆոտոյի-	**Ուսումնական 10 կենտրոնների ղեկավարների, ստեղծագործական 12 խմբերի, ակումբների ղեկավարների հիմնական աշխատավարձ: Մանկավարժական աշխատողների ամենամսյա լրավճարներ՝ ուսումնական ֆլեշմոբների, փառատոնով, համերգով ուսուցման, ակումբների կազմակեպման համար:** *Ուսումնական կենտրոններում ուսումնական հեղինակային նյութական, ուսուցողական միջավայրի, նոր արհեստանոց-արվեստանոց-լաբորատորիայի ստեղծման և զարգացման, լրացուցիչ ուսուցման խմբերի, անհատական պարապմունքների, երկարացված օրվա ճամբարի կազմակերպման ծախսերը կատարվում են ուսումնառության պայմանագրերով որոշված վճարներով: Ճամբարներում սովորողների սննդի, կենցաղի, տեղափոխման ծախսերը կազմակերպվում են ծնողների միջոցներով, գործընկերների նպատակային հատկացումներով:*	2022թ. ընթացքում	32500000

		վլոգերության, ազգագրական ամառային, հայրենագիտական, ռազմամարզական ամառային խաղերի, աշնանային մարզական,Գեղարվեստը կրթահամալիրում, Հակաբացիլ Կոմիտաս, «Սեբաստացու օրեր», «Լույսեր, գույներ, ձայներ, ղողանջներ, ազդեցություններ. • կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված հունվարյան, հունիսյան ուսումնական ճամբարներ, մայիսյան, սեպտեմբերյան, նոյեմբերյանստեղծագործական հավաք-նախագծային ուսուցման ստուգատեսներ. • շուրջտարյա ռազմամարզական, արշավախմբային, հայրենագիտական, բնապահպանական գործունեության նախագծեր, այդ թվում՝ Արատեսում շուրջտարյա, Սևանի ավազանում ամառային ճամբարների կազմակերպում, լրացուցիչ կրթության ճամբարներ նաև սովորողների ուսումնական արձակուրդների շրջանում,գյուղական ճամբարներ, այդ թվում՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Գագարին» նախագծի, Վայոց ձորի գյուղերում. • համերգ-ցուցադրություն-ներկայացումներ, • հանդիպում-վարպետության պարապմունքներ. • տեխնոլոգիական հանրակրթություն արտադրական			

			ուսուցման նախագծերով, այդ թվում՝ երկրագործական, կենդանիների և բույսերի խնամքի-բազմացման, խաղողի և գինու արտադրության, մեղվաբուծության, չորանոցի-չրանոցի, գյուղատնտեսական մթերքի արտադրության, գրքի թվայնացման, էլեկտրոնային գրքի ստեղծման, ձևավորման, հրատարակման, ծեսի-տոնի կազմակերպման. • մանկավարժության կենտրոնում՝ մանկավարժական շուրջտարյա դպրոցի, մանկավարժական բաց ճամբարների, վերապատրաստման դասընթացների կազմակերպում: Մանկավարժական նորարարության բաց ճամբարներ. • Արատեսը՝ դպրոց բնության գրկում, ռազմամարզական, բնապահպանական, հայրենագիտական, ընտանեկան շուրջտարյա ճամբարներ, բարձր լեռնային պայմաններում մասնագիտական ուսուցման բազա: Ուսումնական կենտրոնների, ակումբների նախագծերում հանրակրթական այլ հաստատությունների սովորողների ներառում՝ կրթահամալիրի միջավայրում, հեռավար կամ նախագծի տեղայնացմամբ: Նախագծերի կազմակերպման մեջ՝միջազգային ծրագրերի, մրցույթների, նախագծերի			

		մասնակցություն, գործընկերների մասնագիտական, նյութական, կազմակերպական աջակցությամբ համագործակցային նախագծեր«Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի, «Դար» տարածաշրջանային մրցունակության հիմնադրամի, «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի, «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանություն» հիմնադրամի, «Արավես» ՀԿ-ի հետ, ԵՊՀ-ի, Երիտասարդ կենսաբանների ընկերության, բնապահպանական, մշակութային, գիտական այլ կազմակերպությունների, անհատների հետ:			
եյան բաց ցանցի, ղինակային անկավարժության արածման ործընկերային խագծեր	Հեղինակային մանկավարժության գործընկերների՝ ՀՀ ԿԳՄՍՆ, «Դար» տարածաշրջանային մրցունակության հիմնադրամի, «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի, գործընկեր այլ կազմակերպությունների և անհատների հետ նորարարական մանկավարժական ծրագրեր, գիտափորձեր	Բլեյան բանցի տարածման համաձայնեցված նախագծեր • Կրթահամալիրի, հեղինակային մանկավարժության փորձով Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում, ՀՀ ԿԳՄՍՆ, «Դար», «Սեբաստացիներ» հիմնադրամների հետ հանրակրթական փորձարարական ծրագրի աշխատանք: Սևան համայնքի «Ծաղկունք բաց դպրոց» հիմնադրամը 2022թ. սկսում է փորձարարական կրթական ծրագրի մշակման, ներդրման աշխատանքը՝ ներգրավելով «Դար» տարածաշրջանային մրցունակության հիմնադրամի, «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի, Սևան համայնքի, այլ աջակիցների, ունենալով	*Բլեյան բաց ցանցի փարածման աշխատանքներն իրականացվում են կրթահամալիրի ոչ պետական, կրթական ծառայություններից ստացվող միջոցներով, «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի աջակցությամբ, շահառու-նախաձեռնողների, ծրագրի աջակիցների նպատակային ներդրումներով:*		*Ծրագրից գումար չի ներդրվում:*

			կրթահամալիրի մենթորական աջակցությունը: • ՀՀ Վայոց ձորի մարզում մարզպետարանի և «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի միջև կնքված հուշագրի շրջանակում գործընկերային նախագծեր՝ ՀՀ Վայոց ձորի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատություններում, փոքրաքանակ աշակերտներով համալրված հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատանք, մարզի ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար կամավոր վերապատրաստման և մասնագիտական զարգացման պարապմունքների, մարզի դպրոցների և կրթահամալիրի սովորողների համատեղ ճամբարների կազմակերպում, բնապահպանական, հայրենագիտական նախագծերի իրականացում: • Հեղինակային կրթական ծրագրերի շահառուների նախաձեռնությամբ հեղինակային կրթական ծրագրով նախակրթարանի, դպրոց-պարտեզի ստեղծման, ուսումնական նախագծերով գործընկերության համաձայնեցված նախագծեր Երևանում, հանրապետության			

			մարզերում, համայնքներում, դպրոցներում, մանկապարտեզներում, ուսումնական կենտրոններում:			
Ընդամենը՝						118413800

Ն ա խ ա ր ա ր ու թ յ ու ն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005205
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

Վ. Գևորգյան
Կ.Տ. (ստորագրություն)

Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ
Քաղաք Երևան, Ռաֆֆի 57

ՀՎՀՀ 01804186
Հ/Հ 163218137665

Տնօրեն՝

Ս. Մարկոսյան
Կ.Տ. (ստորագրություն)